

և այլուր, ըլլալու սրտօրաց և անկեղծ ե թերեւ այս ժամանակին խոկ պատճառաւ, Ֆակէն սրդողութեան պէս բան մը ունի շիմաստասէններուն չափագանցուած եւ սիստեմաթիկի ժխտումներուն զիմաց և Այս սրդողութիւնը սաստկութիւն կուտայ իր քննադատութեան, եռանդ՝ իր ոճին, ամբողջ յօդուածին, զիրքին ամբողջ կուտայ ուժին և նկուն կեանք, խանդով և թափանցութեամբ չինուուծ, հեղանքով՝ որ կը ժայթքէ հրթիփի և չարանձի ուրախուած թեան ձեւուզի հմացականութիւնը ժպիտով մը կ'երանցուի, և ժպիտը երբեմն հեղանական է: Բայց բաւ է որ ճշմարտութիւնը իր հաշիւը գտնէ, ո՞վ ըսկիթք պիտի ունենայ: Պրոփ մարտ միայն ապացուածներ որ ճշմարտութիւնը իր հաշիւը կը գտնէ հնա, գծուարին ձեռնարկ թերիւս, որովհեան պէտք էր նախ զստան ըլլալ զայն հւնենալու ։ ։ ։

Այդպէս ուրեմն Փրանսուայի գրական անցեալի մեծ գրագէտներուն ուսումնասիրութիւնը առաջնորդեց Ֆակէն անոնց զիմաց որ ԽVIII դարուն, աւելի մտահոգ կրթելու քան զուարնացնելու, խորհերու քան գեղեցիկ գրուեր առեղծելու կը թուին, ջանացած ըլլալ վերանորոգելու ընկերուած թիւնը ըստ իրենց արդարութեան նոր իստելին: Քննադատան ձեռնարկած գրական քննութիւնն այդ հետեւանքին յանդիցաւն Մէկ կողմէն իր մեթոսին յանկութիւնները, բազմաթիւ ապացոյցներով արդէն արուած, չեն գտներ իրենց ամրողջական ծաղկումը այլ միայն կիրարկուած ուսումնասիրութեան ԽVIII դարու մտածոյներուն, ինչ որ յայտնին է իր մտքին դարձրւած քին և իր մտաւորական բարդողութիւնն, և միւս կողմէն, ընդհանրապէս ժխտական արդիւնքները — որոնց յանգած են օքա մտաստիւնները — սօմուած են զինք դժունելու մտերմօրէն, ինչ որ մեզի կարծել կուտայ թէ վիճականուած խնդիրներուն մէջ, կեղինակներէն առարեր մտատեսիներ ունինք:

#### ԱՄՓՈՓԵՑ

ՊԱՐԳԵՒԻ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԵԼԻՍԵԱՆ

(Նարունակի 7)

## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

### ԱՂԹԱՍԱՐ

ՏԵՂԱԴՐԱԿԱՆ. — Աղթամարի Ս. Խաչվանը կը գտնուէր Վանայ ծովակին մէջ, համանուն կղզիին վրայ:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Աղթամարի կղզին նոր և հոյակապ շինութիւններով պայծառաւ ցնողը եղած է Կագիկ թագաւոր Արծրունի (914—13). իր հրամանով և ձեռնառութեամբ է որ շինուած է Ս. Խաչ հեկեցին (915—21), Մանուէլ ճարտարապետի ձեռքով (Թ. Արքը, էջ 297): Խաչվամարի Ս. Խաչ բնուիր քանդակներով Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին անզուգական օրինակ մը կը թայ հարտարապետութեան մէջ: Այդ քանդակներուն մանրամասն նկարագրութիւնը կատարած է Ե. Լալյայեան (Վասպ. Նշ. Վանքեր, էջ 7—15): Ս. Խաչ եկեղեցւոյ հորժւարիւելիան կողմը կար Ս. Ստեփանոսի անունով փոքրիկ եկեղեցի մը: շինուած 1793ին, Հոռոմշահի որդի Սարգիս և Ստեփանոս կրօնաւորներու ծախքով (Վ. Նշ. Վանքեր, էջ 16—7):

Աղթամարի մէջ նստած են Ամենայն Հայոց Հայրապետաներէն երեքը, 929—46 թագականներուն: Խոկ ժԲ. զարու սկիզբը (1113) ուս հաստատուած է մասնաւոր կառողիկոսութիւն մը որ տեկեց մինչեւ ժԲ. զարու վերջերը (1895): Աղթամարի մշակութային փայլուն շրջանին կաթողիկոսական պաշտօն վարեցին հետեւելաները:

1. — Զակարիա Ա. Սեֆերինեան, 1298—1336, որ յաջողած է քրիստոնեայ Եկեղեցիները ազատուել բանաւորներու ձանկէն: Կմիթ և Աղթամարի մէջ կառուցած է տաճար և Մամատուն:

2. — Ստեփանոս Գ. 1336—46:

3. — Դաւիթ Բ. 1346—68:

4. — Զակարիա Բ. Նահատակ, 1369—93 Յունիս 25 Դչ.:

5. + Դավիթ Գ. 1393—1433, որու կաթողիկոսութեան վերջերը (1431) Փիրի բէկի առաջնորդութեամբ քիւրտերը կը դրաւեն Աղթամար կղզին, կը կողոպտին և կ'ասերին:

6. — Զաքարիս Գ. 1434—64, եղած է գործունեայ և ազգեցիկ կաթողիկոս մը: Զանեանի շնորհի ձեռք բերած է նաև Ա. Էլմածնի կաթողիկոսութիւնը և վարած լոր տարի (1460—64):

7. — Աւելիանոս Գ. 1465—88, որ կաթողիկոսանալէն քիչ յետոյ թագաւոր օծեց իրեն պղպակից Պարոն Սմբատը: Ա. Հանդ. Ամս. 1919, էջ 67 հ.:

8. — Զաքարիս Ի. 1489—95,

9. — Ասոմ, 1496—1510:

10. — Ցովիաննես, 1511—12:

11. — Գրիգորիս Ա. 1512—57, որդի խէտերի և ծառաւմի, նշանաւոր քահանաւող (Հանդ. Ամս. 1915, էջ 18—64): Իր կաթողիկոսութեան օրերւուն (1523—6) Աղքամարը կը գրաւեն սազդն Շամուռնից: Ա. Հանդ, էջ 25:

12. — Գրիգորիս Բ. 1558—86, որդի Ասքանտարի և Գուլանիաշի: Մազմ. 1905, էջ 494:

13. — Գրիգորիս Գ. 1586?—1612?, որդի Աւելիանի և Ղրիմսաթունի: Աղքամարի մէջ կարեւոր նորոգութիւններ կատարած է:

ՄշԱԿՈՂԻԹՈՒՅԻՆ: Աղքամարի վանքը իրեն հայրապետական աթոռ քնականաւոր պիտի ունենար մշակութային նշանակիլի գործունէութիւն: Մեզի հասած գըրսուած քններ և ընդորինակութիւններ պապցոց մըն են այդ մասին: Ժ՞՞ւ գարու սկիզբէն մինչև ժ՞՞ւ գարու վերջները ունինք բաւական երկար շարք մը գրիչներու և ծաղկողներու, որոնց արտապրած գործերէն բազմաթիւ տառնենիներ: յազմելով ժամանակի և մարդոց հարուածներուն, հասած են մինչև մեր օրերը:

Ա. — Դանիէլ Կրօնաւոր, Գրիէլ, աշակերտ Սիրէկոն քահանայի: 1303—1316, որինակած է:

1. — Պատմ. Թ. Արծունելոյ, 1303ին, Արևնեաց Ստեփանոս Արքեպիկոնուունի համար: Թ. Արծուն. էջ 319—20:

2. — Թալլըք Պաւլոսի, 1309ին, բոլոր զիր: Հանդ. Ամս. 1923, էջ 72—3:

3. — Կոչումն Էնճայուրիան, 1316ին, երրեափակուուն էր: Կար. Թ. 749:

Բ. — Կարապետ Կրօն. Աղքամարի, Գրիէլ, 1332ին օրինակած է Աւելարան մը: Ա. Հանդ. Վասար. Թ. 92:

Գ. — Գրիգոր Գրիէլ, որդի Աւելարէասայ, 1355ին օրինակած է Աւելարան մը: Ասացող Մուրատ: — Ծ. Զեռ. Վասար. էջ 203:

Դ. — Ասոմ Կրօնաւոր, Գրիէլ, որդի Վարդան Քահանայի և աշակերտ Ստեփանոս կրօնաւորի, 1366ին օրինակած է Ուսկիփորի մը: — Սարգ. Թ. 264:

Ե. — Կարապետ Քահանայի, Գրիէլ, որդի Մկրտիչ Քահանայի և աշակերտ իր հօրեղջոր Կարապետ կրօնաւորի, 1389—92, օրինակած է:

1. — Ճառընթիր = Տօնական, 1389ին, ստացող Ստեփանոս միայնակեաց: — Արարատ, 1911, էջ 759 հ.:

2. — Աւելարան, 1392ին, ստացող Թագէոս Գլիխոսփայ կրօնաւոր: — Ծ. Զեռ. Վասար. էջ 225:

Զ. — Զաքարիա Կրօն. Գրիէլ, Մաղկող եւ Կազմող նաև փիլիսոփայ, որդի Սկրտիչ Քահանայի, եղբայր Կարապետ Քահանայի (Ե.), աշակերտ Կարապետ կրօնաւորի, 1392—1403, իր գործերէն յայտնի են:

Լ. — Աւելարան, օրինակուած վերոյիշեալ Կարապետ Քահանայէն 1392ին, ծաղկուած իր կողմէ: — Ծ. Զեռ. Վասար. էջ 227, Թ. 107:

2. — Աւելարան, զրած և ծաղկած է 1393ին: ստացող Թագէոս կրօնաւոր: — Ծ.

Գ. Վաս. էջ 227, Թ. 108: Նօտարք էջ 1—2:

3. — Աւելարան, զրած, ծաղկած և կազմած է 1394ին, ստացող՝ տանուտէր Գանիէլ: — Ծ. Զ. Վաս. էջ 233, Թ. 110:

4. — Աւելարան, ծաղկած է 1403ին: Գրիէն է իր եղբօրորդին Գանիէլ: — Նօտարք, էջ 19—20:

Է. — Գանիէլ Քահն, Գրիէլ, Մաղկող եւ Կազմող, որդի Կարապետ Քահանայի (Ե.), աշակերտ իր հօրեղջոր Զաքարիայի (Զ.), 1403—1444, օրինակած է:

1. — Աւելարան, 1403ին: — Նօտարք էջ 19—20:

2. — Մատոնց, 1404ին, երր զեռ սարկաւագ էր: ստացող Կիրակոս Քահանայի: — Թ. Աղքարի, Թ. էջ 276—7:

3. — Աւելարան, 1418ին ծաղկած և կազմած է: Գրիէլ՝ իր եղբայրը Թումայ Կրօնաւոր, ստացող Խաչատոր տանուտէր: — Ծ. Զեռ. Վասար. էջ 310:

4. — Աւելարան, ծաղկած և կազմած է 1433ին: Գրիէն է իր եղբայրը Թումայ

կրօնուոր, որ ընդօրինակութիւնը կատարած է կեցան Գաւառի Ուրանց գիւղը: Ասացող՝ Ներուս քահանայ. — 8. Զեռ. Վասպ. էջ 366, թ. 158: Խօսարք էջ 102:

6. — Աւետարան, 1436ին գրած, ծաղկած և կազմած է. ստացող Յովհաննէս տանուտէր. — 8. Զեռ. Վասպ. էջ 378-6: Խօսարք էջ 107:

6. — Աւետարան, օրինակած է 1441ին. ստացող՝ տանուտէր Մկրտչ. — 8. Զեռ. Վասպ. էջ 381: Խօսարք էջ 127:

7. — Ճառց, օրինակած է 1444ին. ստացող Առաքել քահանայ. — Խօսարք էջ 134-5:

8. — Թումայ Կրօնաւոր, Գրիշ, որդի Կարապիտ քահանայի (Ե.), եղբայր և աշակերտ Դմիտրէ քահանայի (Ե.), 1418-33, օրինակած է:

1. — Աւետարան, 1418ին, Խոչառութանուտէրին համար. — 8. Զեռ. Վասպ. էջ 309:

2. — Աւետարան, օրինակած է 1433ին, Ուրանց գիւղին մէջ, Ներուս քահանայի խնդրանքով. — 8. Զեռ. Վասպ. էջ 363: Խօսարք էջ 102:

Թ. — Թումայ Արզ. Մինասենց, Գրիշ, Մազկող և Կազմող, նաև ժամանակակիր, որդի Միմէնին, և աշակերտ Թումայ միայնակցի, 1418-52: Բազմաթիւ եղած են իր գործերը, որոնցից մեզի ծանօթներն են:

1. — Աւետարան, 1418ին գրուած և նկարագրուած. ստացող Կիրսկոս Կրօնաւոր, որուն պատկերը, ինչպէս նաև Թումային կը գտնուին գրքին սկիզբը. — Ազգ. Հանդ. թ. 1897 էջ 286:

2. — Աւետարան, գրուած Թումայ արեղայէն ի Պատրիայ վանս, 1419ին. Թումայ Արզ. Մինասենց ծաղկած է. — 8. Զեռ. Վասպ. էջ 317:

3. — Աւետարան, 1420ին օրինակած է Վարդան Կրօնաւորի խնդրանքով. — 8. Զեռ. Վասպ. էջ 321:

4. — Աւետարան, 1425ին օրինակած է. ստացող Խաթուն. — 8. Զ. Վասպ. էջ 351:

5. — Աւետարան, 1428ին օրինակած է. ստացող Արքահամ Կրօնաւոր. — Խօսարք էջ 87-9:

6. — Աւետարան, օրինակուած է 14-41ին Դմիտրէ քահանայի Կողմէ. Թումայ արզ, ծաղկած է. ստացող՝ տանուտէր Մկրտչ. — 8. Զեռ. Վասպ. էջ 384:

7. — Աւետարան, 1444ին օրինակած է իր քեռորդին Հայրապետ արեղայ. ծաղկած և կազմած է Թումայ արզ.՝ Ասացող՝ Գաւառչը Թումայ Ղուզիկ. — 8. Զեռ. Վասպ. էջ 386: Խօսարք էջ 133:

8. — Մատոց, օրինակած է 1445ին. ստացող Յովհ. Կրօնաւոր Բըծոնց, Գաւառչը. — Խօսարք էջ 136:

9. — Գանձարան, օրինակած է 1445ին և նուիրած Աղթամարայ Ս. Խաչին. — Խօսարք էջ 146:

10. — Նարեկ, օրինակած է 1452 թուն. — Խօսարք էջ 170:

Ժ. — Թումայ Կրօնաւոր, Գրիշ, օրինակած է 1419ին, ճառց մը. ստացող Մկրտչի քահանայ. Խօսարք էջ 67-8: Յայսլաւութէ մը, 1442ին. և Խօսարք էջ 128: Մայր Մատոց մը, 1463ին, տանուտէր Արխանի [Մելիսանի?] ժափառով. — Խօսարք էջ 216: Ճառնիթէ մը, չ. 1465ին, որուն ստացողն է եղած Միրտ թագաւոր Արքօնուի. — Հանդ. Ամս. 1915 էջ 19:

ԺԱ. — Թումայ Կրօնաւոր, Գրիշ, որդի Խաչիկի և աշակերտ իմաստաւէր փիլիսոփայ Առում վարդապետի, օրինակած է ճառց մը 1421ին. ստացող Յովհ. Կրօնաւոր. — Խօսարք էջ 67:

ԺԲ. — Յովհաննէս Կրօնաւոր, Գրիշ, օրինակած է Աւետարան մը, 1421ին. — 8. Զեռ. Վասպ. էջ 361:

ԺԳ. — Մկրտչի Կրօնաւոր, Մազկող, վախճանած 1428ին կամ յառաջ Մինասենց Թումայ Արեղայի հօրեղմօր Վարդանի որդին, որ իր՝ Թումայի 1425ին օրինակած Աւետարանը ծաղկած է. ստացող Խաթուն. — 8. Զեռ. Վասպ. էջ 353: Խօսարք էջ 89:

ԺԴ. — Յովհ. Սարկաւագ, Թուլզի Կողող, որդի Դմիտրէ քահանայի: Իր հօրը 1444ին օրինակած ծալցոցին Թուլզի Կոկած և կցած է. — Խօսարք էջ 135:

ԺԵ. — Հայրապետ Արեղայ, Գրիշ, որդի Խաչիկ և Ասկիի: 1444-90: օրինակած է:

1. — Աւետարան, 1444ին. ստացող Գաւառչը Թումայ Ղուզիկ: — Խօսարք էջ 133: 8. Զեռ. Վասպ. էջ 385:

2. — Աւետարան, 1446ին. ստացող Էլեութեցի Տրիքին Շնուհոր. — Խօսարք էջ 152-3: 8. Զեռ. Վասպ. էջ 395:

3. — Աւետարան (Մալիկ), 1459ին. — Խօսարք էջ 193:

4. — Աւետարան, 1465ին. — Հանդ. Ամս. 1919 էջ 72.

5. — Ճառըթիթ, օրինակած է 1467-8 թուրին, կէսը ի Ս. Էջմիածին և կէսը Աղթամար, ի խնդրոյ Ֆախըրկանց տանուտքը Յովհաննու. — Խօսարք էջ 231.

6. — Աւետարան, 1490ին, արգեամբ Թուրաթ Խաթուռի. — Հ. Ամս. 1910 էջ 53.

ԺԶ. — Գրիգոր Քահանայ, Գրիչ, 1444-63, որդի Խաչիկի և Աղիմմէլիքի. Օրինակած է,

1. — Մատոց, 1444ին. ստացող Քարիմ. — Խօսարք էջ 134.

2. — Աւետարան, 1449ին. ստացող Միկին Թուրուանդայ. — Յ. Զեռ. Վասպ. էջ 403.

3. — Աւետարան, 1452ին. ստացող Միկին Սուլտան Մէլէք. — Յ. Զեռ. Վասպ. էջ 413.

4. — Ճառըթիթ, 1461ին. ստացող Ամսով Կրօնաւոր Եանմէլլքենց. — Խօսարք էջ 199-200.

5. — Մայր Մատոց, 1463ին. — Հանդ. Ամս. 1919 էջ 67.

ԺԷ. — Ներսէս Արեգայ, Գրիչ, 1448-65, որդի Կուռճիքէկի, օրինակած է.

1. — Աւետարան, 1448ին. ստացող Հայրապետ Արդ. Շատանցի, որ ծաղկած և կազմոծ է 1449ին. — Խօսարք Թ. 171.

2. — Աւետարան, 1457ին. — Խօսարք Թ. 218.

3. — Աւետարան, 1458ին. — Հանդ. Ամս. 1919 էջ 68.

4. — Աւետարան, 1460ին. ստացող Թուրայ, Թուզ Կոկոյ իր սպականը Էղդանիրախ սարկաւագ. — Յ. Զեռ. Վասպ. Թ. 183, Խօսարք Թ. 234.

5. — Աւետարան, 1461ին, բոլորագիր. — Յ. Զեռ. Վասպ. էջ 435.

6. + Մատոց Թոգուորշինե, 1465 ին? . — Հանդ. Ամս. 1919 էջ 71 և 74.

ԺԸ. — Գրիգոր Քահանայ, Գրիչ, որդի Աղարսանի, 1454ին օրինակած է Աւետարան մը; որուաթուզը կոկած է Թուրմայ սարկաւագ. — Հանդ. Ամս. 1937 էջ 579, Տաշ. Յ. էջ 891 (9).

ԺԹ. — Ցակոր Կրօնաւոր, Գրիչ, 1458 ին օրինակած է Մայր Մատոց մը. . . Խօսարք էջ 187; Կար. Թ. 945;

Ի. — Թուրմայ Կրօնաւոր, Գրիչ, բաշակերտ Ներսէս արքաւուակած է Խօսարք էջ 187; Կար. Թ. 945;

Ներսէս Արդ.), օրինակած է 1465ին Աւետարան մը «Նէկ» անունով հուչակուած և կրաչագործ. — Թ. Աղբար Բ. էջ 446-7. Հանդ. Ամս. 1919 էջ 72 ծնթ. 1.

ԻԱ. + Մկրտիչ Արեղայ, Գրիչ, որդի Թուրմայի և Եակամաթի, 1466ին օրինակած է Գանձարան մը. ստացող Տէր Յովհաննէս. — Խօսարք էջ 224.

ԻԲ. — Գրիգոր Արեղայ, Գրիչ, որդի Աէթայ և աշակերտ Թուրմայ քահանայի, 1470ին օրինակած է Աւետարան մը ստացող Հովհան Խաթուռ. . . Յ. Զ. Վազ. էջ 457.

ԻՋ. — Թուրմայ Քահանայ, Գրիչ, 1471-6, որդի Գր. քահանայի որդէ սորված է գրչութեան արուեստը. Օրինակած է,

1. — Աւետարան, 1471ին. ստացող Մարտիրոս. — Հանդ. Ամս. 1919, էջ 73.

2. — Աւետարան, 1476ին, առանուտէր Սադազի համար. — Յ. Զ. Վասպ. էջ 479.

ԻՒ. — Մատիէս Արեղայ, Գրիչ, օրինակած է Աւետարան մը 1497ին. — Կար. Թ. 254:

ԻԵ. — Կոժային(?), 1481ին օրինակած է Նարակոն մը. — Կար. Թ. 1543.

ԻԶ. — Զարարիս Գրիչ, 1487ին օրինակած է Աւետարան մը, Միկիթար Կրօնաւորի փափաքոյ. — Յ. Զեռ. Վասպ. էջ 505.

ԻՀ. — Կարապետ Քահանայ, Սալկոզ, որդի Յովհաննէսի, 1490ին ծաղկած է իր Կորեղոր Հայրապետ Արեղայի օրինակած Աւետարանը. — Հանդ. Ամս. 1910 էջ 53.

ԻԼ. — Ցակոր Կրօնաւոր, Գրիչ, և անյալթ փելիսափայ, որդի Յավսեփայ, 1493-Մ. 1526, օրինակած է.

1. + Աւետարան, 1493ին, զոր ծաղկած է Պարսամ քահանայ: ստացող Խօջայ Միրիչան. . . Յ. Զեռ. Վասպ. էջ 519.

2. — Շաւակենց, զոր կազմած է իր աշակերտը Աղվաչի, Լիմ Հղիկին մէջ + 1526ին, և վերադառնուցած է Աղթամարայ Մ. Խաչին. — Հանդ. Ամս. 1915 էջ 31-2; Նոյ. 1938 էջ 354.

ԻԹ. — Գրիգոր Արեղայ, Գրիչը որդի Սարգսի և Խալիմի, 1497ին օրինակած է Աւետարան մը. — Բազմ. 1905 էջ 493. Հանդ. Ամս. 1915 էջ 22.

Լ. — Ստեփանոս Արեղայ, որ այս գարուն Աղթամարի մէջ գրած է Աւետարան մը, եւէքսան տանուաէրին համար. — Յ. Զեռ. Վասպ. էջ 545:

լ.Ա. - Յովսէփի Գրիշել Կազմող, 1512  
+33, Աղթամարի մէջ օրինակած է.

1. — Եարական, 1512թն, ի Ս. Պատար  
(Ե.): — Բազմ. 1905, էջ 492 ձնթ. 1:

2. և Եարական, 1512թն, ի Ս. Պատար  
(Հ.): — Բազմ. 1905, էջ 492 ձնթ. 3:

Եթ. — Անանուն Աբեղայ, Գրիշ, 1547թն  
օրինակած է Մատոց մը. — Կար. թ. 1005:

Եթ. — Գրիգոր Քահանայ, Գրիշ, օրինակած է 1560թն Ալեքսան մը. ստացող  
Կորոպես քահանայ. — Յ. Զ. Վաս. էջ 661:

Եթ. — Մելքիսէթ Գրիշ, օրդի Վըրգառ  
Նէսի, 1573թն օրինակած է Մատոց մը. —  
Յ. Զեռ. Վաս. էջ 29:

Աղթամարի վերջիշեալ գրիշներու ցանե  
կին մէջ աչքի կը զարնէ անոնց շատերուն  
ազգակցական կազմը, զոր աւելորդ չենք  
համարիր ամփոփիլ ստորև:

Նախ կը յիշուին Կարապետ կրօնաւոր  
(Բ) և անոր եղաթը Մկրտիչ քահանայի զա-  
ւակներէն Կարապետ քահանայ (Ե) և Զաւ-  
քարիս փիլիսոփիայ (Չ): Ապա սոյն Կարա-  
պետ քահանայի օրդիները Դանիէլ քա-  
հանայ (Ե) և Թօնիսաւոր (Ը): Եթու  
առ Դանիէլ քահանայի օրդիներէն Առփ-  
հանէս ուրկաւագ (ԺԴ):

Դարձեալ, վերոյիշեալ Մկրտիչ քահան-  
այի օրդիներէն Խաչիկի երկու զաւակները  
Թօնիսաւոր (ԸԱ) և Գրիգոր քահան-  
այ (ԺՉ): Ապա այս վերջինին օրդիներէն  
Թօնիսայ քահանայ (ԽԻ): Եթուոյ վերջիշեալ  
Խաչիկի գումարերէն Արդունի օրդին Թօնի-  
մայ Արզ. Մինասենց (Թ) և միւս զստեր  
Հալիլիսաթունի օրդին Գրիգոր Սրբեղայ (ԽԸ):

Դարձեալ վերոյիշեալ Արդունի զստեր  
Ասկիի օրդիներէն Հայրապետ Արեղայ (ԺԵ)  
և թուոց Կարապետ քահանայ (ԽԵ):

Այսպէս մէկ ընասանիքի սերած տասն  
երեք գրիշներ և ծաղկողներ իրարու յաւ-  
ջորդած են ժԴ. դարու կէսէն մինչև ԺԵ.  
դարու վերջերը, գրիշներ, օրոնցմէ շա-  
տերը նշանաւոր հանգիսացած են իրենց  
արտադրած գործ երուն գեղեցիութեամբ և  
առատութեամբ:

Ն. Վ. ՄՈՎԱԿԱՆ

## ԼԵԶՈՒԱԳԻՑՑԱԿԱՆ

### ՑՈՒՆԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ<sup>(1)</sup>



Եթէ բայց այսքան անհունի Կերպով  
այլափոխած և յորմարեցրած էր յունա-  
րէնի աւելորդ է ասիլ թէ ինչ պիտի լինէր  
համաձայնութիւնը եւ շարադարակութիւնը,  
որ առանց այն էլ մեծ տարբերութիւն չուա-  
նէր յունարէնից և իր պատառութեամբ կա-  
րող էր ստանալ ամէն ձեւ ու կարգ: Յու-  
նարան հեղինակների բոլոր թարգմանու-  
թիւնները կրում են ճիշտ յունարէնի շա-  
րադարակութիւնը, խնդրասութիւնը նոյն ձե-  
ւով է, ընդունուած սովորութիւնն է ածա-  
կանները և դերբայնները միշտ համաձայ-  
նեցնել գոյականի հետ են: Ահա մի քանի  
կարծ օրինակներ:

Զի վերայ եկելացն գործս.

Կարող է զրովանդակն յայննել զազգ:

Մանկան ելոյր եւ այրացելոյր եւ ներ-  
գործելոյր ինչ կամ զագարերեյր (այսինքն՝  
մանուկ գոլով եւ յարրեւն հասիալ եւ  
գործելով ինչ կամ զագարելով):

Այն բոլոր փոփոխութիւններ՝ որ վե-  
րեւում նկարագրինք (բառական), գրաւ-  
կանական և համաձայնական) մի անգամից  
անմիջապէս տեղի չունեցան, այլ կամաց  
կամաց սկզբում գտնդազ միայն բառա-  
րանական շրջանում և այն էլ կարեւորած  
գոյն բառերի համար, իսկ աւելի յիտոյ ըն-  
դարձակուելով բռնեց ամրող բառարանը  
և գերականութիւնը: Այսպէս Փարպիցու  
մէջ՝ որ Ե. գարու վերջում ապրած նեղի-  
նակ է, ամրող Սահակայ տեսիլը իր մեկ-  
նութեամբ, ինչպէս և Թօնիթ առ Վահան  
Մամիկոննեան զունի ոչ մի բառ՝ որ կազ-  
մըւած լինի յունաբան գլորցի յօրինած նաև  
խամասնիկներով: Նոյնպէս է Եղիշէն: Խո-  
րենացու Պատմութիւնը բաւական հարուսա-  
է իսկ Դաւիթի Անյաղթի գործերի ամրող ջ  
բառարանն ու գերականութիւնն այնպէս  
յունաբան են, որ կարծես թէ առանձին

(1) Հարաւանիկորիմ՝ մեծանուն նեղինակի Պատ-  
մութիւն Հայ Լեզուի գործն (ԺԹ. Գլուխ):